Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում

Հաստատություն՝ Ամենագետիկ խնամքի կենտրոն

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Դաստիարակ՝ Սողոմոնյան Աննա

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն ……3
2. Բովանդակություն……4
3. Գլուխ 1: **Ազգային տոները և ծեսերու հեթանոսությունից մինչև քրիստոնեություն**……5

Նոր Տարի

Քրիստոսի օնունդը

Տեառնընդառաջը

Բարեկենդանը

Մեծ Պաս

Ծաղկազարդը

Զատիկը

Համբարձումը

Վարդավառը

Նավասարդը

4. **Գլուխ 2** Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում……10

Ներածություն

Ծես (հուն.՝ ritual) – աստվածապաշտական, խորհրդաբանական գործողություն կամ արարողություն կամ գործողությունների ու արարողությունների շարք, որով կրոնական կառույցը կամ հավատացյալներն արտահայտում են իրենց նվիրումը, պաշտամունքը հոգևոր, գերագույն սկզբին: Բացի կրոնական ծեսերից կան նաև ազգային, էթնիկական, սովորութային ծեսեր:

Բազմաթիվ ծեսեր ու ծիսական գործողություններ նկարագրված են Աստվածաշնչում, ինչպիսիք են՝ օծման ծեսը, զատկական ծեսը, զոհաբերությունը. . . Հայ եկեղեցական ծեսը սկզբնական շրջանում կատարվել է՝ ըստ հունական և ասորական առաքելական ավանդությունների: Գրիգոր Լուսավորչից սկսած, իսկ հետագայում հայոց գրերի գյուտից և Աստվածաշունչը հայերեն թարգմանելուց հետո, ընդհանրական ծեսը ձեռք է բերել ազգային՝ հայկական դիմագծեր: Ծեսի բովանդակային առանցքը կազմող շարականների, աղոթքների խմբագրման և հատուկ դասավորության գործում մեծ դեր են խաղացել Սահակ Ա Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը և Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսը: Հետագայում եկեղեցու ծեսը ևս ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ժողովուրդները հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Դա է հենց պատճառը որ ժողովրդական տոնի հանդիսակարգը պետք է հարազատ լինի կոնկրետ կյանքով ապրող մարդկանց : Ծեսը մարդու կյանքի ամենակարևոր բաղկացուցիչն է և իրենից ենթադրում է դինամիկ զարգացում, այսինքն յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանից խուսափելով կարող ենք հանգել ծեսի վերացմանը: Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Նախկինում կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում էին ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով,

ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:
Այս աշխատանքի նպատակն է ցույց տալ,թե ինչքան կարևոր է ազգային ծեսերի պահպանումը և սերնդեսերունդ փոխանցումը : Աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից,բովանդակությունից,ներածությունից,1 գլխից,եզրակացությունից և գրականության ցանկից :

Գլուխ 1

Ազգային տոները հեթանոսությունից մինչև քրիստոնեություն

Տոների տոնական համակարգի ձևավորման և փոփոխման գործընթացների ու մեխանիզմների, ինչպես նաև հասարակական ու ընտանեկան կյանքում դրանց գործառութային նշանակության բացահայտումը ոչ միայն տեսական, այլև կիրառական առումով կարևոր և հրատապ հիմնախնդիր է: Առնչվելով տվյալ էթնոսի ծագման և զարգացման որոշակի հիմնախնդիրներին, տոնն արտացոլում է ոչ միայն էթնոմշակութային ինքնատիպությունը, այլև էթնիկ շփումների հետևանքով առաջացած փոխազդեցությունները: Հետևաբար՝ մշակութային այս տարրի ուսումնասիրությունը կարևորվում է նաև միջէթնիկ փոխհարաբերությունների տեսանկյունից: Տոնն իրենից ներկայացնում է յուրատեսակ միկրոհամալիր, ուր առկա են կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր բաղադրիչները բնակավայր, բնակարան, ազգակցական, դրացիական, ընտանեկան հարաբերություններ, նախնիների հիշատակ, ամուսնական ծիսաշար, երաժշտական ստեղծագործություններ, խաղեր, ուտեստ և տնտեսական գործունեության ավանդական փուլեր՝ դրանց հաջողություններն ապահո5 վող ծեսերով ու սովորություններով: Նշված տարրերի նույնիսկ այս ոչ ամբողջական ցանկը բավական է հիմնավորելու տոներում առկա կենցաղամշակութային բազում շերտերը: Բնականաբար, հարուստ է նաև մշակութային այս երևույթն ուսումնասիրող գիտությունների տեսականին: Տոների և ծեսերի հետ առնչվող առանձին հիմնահարցեր են շոշափում մշակութաբանությունը, ազգագրությունը, բանագիտությունը, կրոնագիտությունը, աստվածաբանությունը, սոցիոլոգիան, տոմարագիտությունը, գեղագիտությունը, հոգեբանությունը և գիտության այլ բնագավառներ:

Մշակույթը չէր պահպանվի, և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված **ծեսերը**: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Հայ եկեղեցին ծեսը սահմանում է որպես աղոթքի կարգ, որն ունի կարգավորված և ներդաշնակ նկարագիր: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնություններ և քրիստոնեական դավանության :Տոների ձևավորումը և զարգացումը, որպես օրինաչափություն, պայմանավորված է սոցիալական, տնտեսական, պատմական, քաղաքական, էթնոմշակութային և կրոնական գործընթացների փոխազդեցություններով: Արտացոլելով հասարակության մեջ իրականացվող այդ գործընթացները, տոները կատարում են էթնիկ ավանդույթների պահպանման և դրանք սերունդներին փոխանցելու կարևորագույն գործառույթներ: Տոները կատարում են նաև էթնիկ ավանդույթների կողմնորոշման, հասարակական հարաբերությունների կարգավորման և անհատի պահանջների բավարարման գործառույթներ: Այդ իսկ պատճառով տոնական համակարգի ձևավորման և փոփոխման գործընթացների ու մեխանիզմների, ինչպես նաև հասարակական ու ընտանեկան կյանքում դրանց գործառութային նշանակության բացահայտումը ոչ միայն տեսական, այլև կիրառական առումով կարևոր և հրատապ հիմնախնդիր է: Առնչվելով տվյալ էթնոսի ծագման և զարգացման որոշակի հիմնախնդիրներին, տոնն արտացոլում է ոչ միայն էթնոմշակութային ինքնատիպությունը, այլև էթնիկ շփումների հետևանքով առաջացած փոխազդեցությունները: Հետևաբար' մշակութային այս տարրի ուսումնասիրությունը կարևորվում է նաև միջէթնիկ փոխհարաբերությունների տեսանկյունից: Տոնն իրենից ներկայացնում է յուրատեսակ միկրոհամալիր, ուր առկա են կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր բաղադրիչները բնակավայր, բնակարան, ազգակցական, դրացիական,

ընտանեկան հարաբերություններ, նախնիների հիշատակ, ամուսնական ծիսաշար, երաժշտական ստեղծագործություններ, խաղեր, ուտեստ և տնտեսական գործունեության ավանդական փուլեր' դրանց հաջողություններն ապահո5 վող ծեսերով ու սովորություններով: Նշված տարրերի նույնիսկ այս ոչ ամբողջական ցանկը բավական է հիմնավորելու տոներում առկա կենցաղամշակութային բազում շերտերը: Բնականաբար, հարուստ է նաև մշակութային այս երևույթն ուսումնասիրող գիտությունների տեսականին: Տոների և ծեսերի հետ առնչվող առանձին հիմնահարցեր են շոշափում մշակութաբանությունը, ազգագրությունը, բանագիտությունը, կրոնագիտությունը, աստվածաբանությունը, սոցիոլոգիան, տոմարագիտությունը, գեղագիտությունը, հոգեբանությունը և գիտության այլ բնագավառներ:/Սամվել Սուրենի Մկրտչյան տոներ էջ 8/

Այսպիսով, եկեղեցական ծիսակարգում հնագույն ծեսերը ներկայացված են բովանդակային-տիպային հետևյալ կառուցվածքով.

1.ծեսեր, որոնք վերաբերում են կյանքի հիմնական հանգուցակետերին. (մկրտություն, պսակ, թաղում և այլն).

2. Ջրի պաշտամունքի հետ կապված ծեսեր (ջրօրհնեք, խաչալվա, ոտնլվա, ջրհորի օրհնություն և այլն).

3. երկրագործության (նաև բուսականության) և պտղաբերության պաշտամունքից բխող ծեսեր (սերմ, շեղջ, կալ, հնձան, անդաստան, խաղողօրհնեք).

4. Ընտանիքի պաշտամունքի օրհնություններ (տան, ընտանիքի, սեղանի, աղի և այլն): Սակայն հետաքրքիր է, որ քրիստոնեական այդ ծիսարան-ժողովածուում տեղ էին գտել նաև սկզբնապես հմայական և ոգեկոչման գործողությունների հետ կապված ծեսերի հետևյալ խումբը.

5.Դիվահար, լուսնոտի, դժվարածին կնոջ վրա, երաշտի դեմ կարդացվող աղոթքներ, մատաղի և հացի օհնություն

ներ և այլն: Սույն աշխատության մեջ ներկայացված են հայոց ավանդական կենցաղում առավել տարածված տոները՝

- Նոր Տարին
- Քրիստոսի օնունդը
- Սուրբ Սարգիսը
- Տեառնընդառաջը
- Բարեկենդանը
- Մեծ Պաս
- Ծաղկազարդը
- Զատիկը
- Համբարձումը
- Վարդավառը
- Սուրբ Աստվածածնի Վերափոխումը
- Խաչվերացը
- Նավասարդը:

Ներկայացնելով դրանցից յուրաքանչյուրի ընդհանուր պատկերն իրենց ծիսասովորութային հիմնական բաղադրիչներով, միաժամանակ որոշակի ուշադրություն է դարձվել հայոց քրիստոնեական տոնացույցի հենքը կազմող հիշյալ տոների ծագումնաբանական խնդիրներին, դրանց քրիստոնեական և մինչքրիստոնեական արմատներին, հեթանոսական զուգահեռներին՝ պայմանավորված տնտեսության, ընտանիքի և անձի բախտն ու ճակատագիրը կանխագուշակող հմայական բնույթի ծեսերով, սովորույթներով ու հավատալիքներով: Ավանդական կենցաղում տարածված տոների վերաբերյալ օգտագործված աղբյուրներն ու հետազոտությունները տարածական առումով ընդգրկում են Պատմական Հայաստանը և հայկական առանձին գաղթօջախները: Վերջին հարյուրամյակում հայոց տոնական համակարգի ընդհանուր պատկերն ու էվոլյուցիոն գործընթացն ամբողջությամբ ներկայացված է արխիվային, մամուլի, ինչպես նաև դաշտային ազգագրական և սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով: Ուշագրավ է, որ ժամանակագրական առումով այն ընդգրկում է տոնածիսական առանձնահատուկ համալիրներ ունեցող Հայոց Առաջին, Երկրորդ (Խորհրդային) և Երրորդ Հանրապետությունները: Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների արդյունքն ամբողջությամբ ամփոփված է հեղինակի կողմից մշակված սոցիոլոգիական աղյուսակներում և գծապատկերներում, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Ավանդական տոները այստեղ դիտարկվել են

կենցաղում տարածված և գլխավորապես խորհրդային աշխարհիկ բնույթի տոների ընդհանուր համատեքստում: Պետական-արխիվային և օրենսդրական ու գերատեսչական տարաբնույթ փաստաթղթերի հիման վրա ներկայացվել են նաև հայկական երեք հանրապետությունների պետական բոլոր տոները:

Գլուխ 2

Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ և ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԶՐՕՐՀՆԵՔ

Ծննդյան տոնի հանդիսությունները հայ ժողովրդի կենցաղում պտտվում էին նախ և առաջ եկեղեցու ծիսակարգի շուրջ: Բայց և այնպես դրանց միահյուսվել էին որոշ ժողովրդական սովորություններ, որոնք տոնին մասնակիորեն հաղորդում էին ազգային բնույթ:Այդ երեկո սեղանի գլխավոր զարդը ձկնեղենի զանազան տեսակներից պատրաստված խորտիկներն էին՝ խաշած, տապակած, ձկով կարկանդակ, խորոված ձուկ և այլն: Ընթրիքի ընթացքում տուն էին մտնում Քրիստոսի ծնունդն ավետող տղաների 3-5 հոգիանոց խմբեր, տանտերերից ստանում յուղ, ձու, ընկույզ, այլ մթերքներ: «Ավետիս» երգերը շատ բազմազան են, երգվում են տեղական բարբառով: Դրանցում փառաբանվում են Փրկչի առաքինությունները, հրաշագործությունները, ապա բարեմաղթություններ ընտանիքին և նրա անդամներին: «Ավետիս» երգերի ընդհանուր բարեմաղթությունների թեման հնչում է մոտավորապես այսպես.

Թող ձեր սեղանն բոլորի, ավետիս,
Կթխանի մեջ գինով ի լի, ավետիս,
Ձեր բարեկամքն ուրախանան, ավետիս,
Չարակամքն ի դառս պատռին, ավետիս:

Մանկապարտեզում հնարավոր է տալ ինֆորմացիա այդ տոնի մասին և սովորեցնելով այս բանաստեղծությունը՝կատարել ծիսակարգ:

Ջրօրհնեք

Ջրօրհնեքի տոնական ժողովրդական ծիսաշարն, անշուշտ, առնչվում է վաղնջական ժամանակներից հայոց մեջ հայտնի ջրի պաշտամունքի գաղափարին, որի դրսևորումներն առտնին ու տոնական կենցաղում ձգվում էին ողջ տարվա ընթացքում և միտում ունեին մարդկանց հաղորդակցել ջրի մաքրագործող ու կենարար զորությանը:Մանկապարտեզում կարելի է օրհնված ջուր մատուցելու միջոցով ծանոթացնել տոնին :

Տյառնընդառաջ

Այս տոնը ժողովրդի մեջ հայտնի է Տերընդեզ, Տըրընդեզ, Տերինտազ, Տերընաաս, Դառդառանջ, Տանտառեջ, Դոռոնջ, Դոնտառունչ, Տոռոնչ-Տոռոնչ, Տենդառաջ, Դրնդեզ անուններով: Տոնի պաշտոնական Տեառնընդառաջ անունը բացատրվում է Քրիստոսի կենսագրության այն իրողությամբ, ըստ որի, երբ Փրկչի ծնողները նրա ծննդյան 40-րդ օրը նրան տաճար տարան, այստեղ ընդառաջ եկավ Տիրոջ գալստյանն սպասող և խոր ծերության հասած Սիմոն ծերունին, որտեղից էլ առաջացավ Տեառնընդառաջ Տիրոջն ընդառաջ անունը: Տոնական հանդիսությունները, սակայն, ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ վաղնջական պատկերացումների հետ:
Տերընդեզ՝ դարմանը ու կես,
Առ հաց ու կես, ելիր գեղես,
Տերընդեզ, մխի (ծխի) դին (կողմը) տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Հայերի մեջ Բարեկենդանը ամենասպասված ու ժողովրդական տոներից մեկն էր։ Տոնին պատրաստվում էին ընտանիքի բոլոր անդամները՝ առանց բացառության։ Մարդիկ զվարճանում էին, տրվում խրախճանքին ու պատրաստում ճոխ սեղաններ։ Նախապատվությունը տրվում էր հատկապես մսեղենին, յուղոտ կերակրատեսակներին ու կաթնեղենին։Մանկապարտեզում բարեկենդանիտոնին ընդառաջբպատրաստվումեն դիմակներ և կատարում են զեղեցիկ ծիսակարգ,քանի որ նախկինում հրապարակներում կազմակերպվում էին տարատեսակ խաղեր, պարեր, թատերական ներկայացումներ և դիմակահանդեսներ։Բարեկենդանը բացի կերուխումից ու խրախճանքից նաև ազատության օր էր

Բարեկենդան, փորեկենդան.
Բարեկենդան օրեր է,
Խելքս գլխես կորել է:

Ծաղկազարդ

Ուռենու ճյուղեր

Ծառզարդար, Զըռըզարդար, Ծառկոտրունք, Մեծ պասի 6-րդ կամ Զատիկին նախորդող <u>կիրակի</u> օրն է։ Քրիստոնյա այլ ժողովուրդների նման <u>հայերը</u> նույնպես այդ օրը նոր բողբոջած <u>ուռենու</u> ճյուղերով զարդարում են <u>եկեղեցիները</u> և իրենց բնակարանները։ Դրանում նրանք տեսնում են մեծ կենսական ուժ և կյանքի

շարունակություն: Այդ բողբոջները օգտագործում են բազմաթիվ ձևերով: Այսպես, գիշերը եկեղեցում օրհնված ուռենու ճյուղերը, որոնք «օժտված» էին առատացնող զորությամբ և չարխափան էին, տուն էին տանում, գցում բոլոր մթերքների կարասները, ամբարը, դրանցով թեթևակի խփում անասուններին, միմյանց, հատկապես հիվանդներին, իսկ փոթորկի ժամանակ, խաչաձև դնում էին կրակին վստահ, որ փոթորիկը կավարտվի անմիջապես: Այդ օրվա համար տանտիկինները մեծ քանակությամբ աղանձ էին պատրաստում, քանի որ կյանքի անընդհատության խորհրդանիշ աղանձը գարնան ավետաբեր ծառզարդի առաջնային ուտելիքն էր: Աղանձ ու ձու էին տալիս նաև այդ կիրակի ուռենու ճյուղեր նվիրաբերելու համար տվյալ տուն այցելած երեխաների խմբերին, որոնք շրջում էին զանազան ճռռացող ինքնաշեն խաղալիքներով, կարկաչաներով, աղմուկով բակերը մտնում և Երգելով շնորհավորում տոնը.

Ծառզարդար, ծառին զարգար,
Խունգ առեք, խունգ ծխեցեք,
Սև հավեն հավկիթ գուզեմ,
Կարմիր կռվեն եղ գազեմ,
Վեվ օր տա՝ շեն մնա,
Վեվ օր չտա՝ չոր չորնա:

ԶԱՏԻԿ

Զատիկը ամենահին և ամենասպասված տոներից է Քրիստոնյա աշխարհում: Բոլորը միմյանց այդ օրը շնորհավորում են՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» –«Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:Զատիկից առաջ պասի շրջանում հայկական ընտանիքներում սկուտեղի վրա՝ բամբակի բարակ շերտով ցանում են ցորեն կամ այլ սերմ և դնում են այն լուսավոր տեղում, այնքան մինչև աճում են: Այդ կանաչ բույսը խորհրդանշում է գարունը և բնության զարթոնքը:

Խոտի վրա դրվում են ներկված ձվերը և զարդարում են տոնական սեղանը:Մինչ այժմ հայերը պահպանել են ձվերը կարմիր գույնով ներկելու և կորեկ հացի Աստվածաշնչյան սովորույթը: Երբ Քրիստոսին խաչել են, նրա մայրը վերցրել է մի քանի ձու և փաթաթել դրանք կտորի մեջ: Երբ մայրը տեսել է իր որդուն խաչված և արյունոտ, նա ծնկի է իջել և լաց է եղել: Մոր արցունքները և որդու արյունը թափվելով ձվերի վրա ներկել են դրանք, իսկ կտորը մայրը գցել է իր գլխին: Այդ օրվանից ավանդական է դարձել կարմիր գույնով ներկել ձվերը, իսկ կանայք գլխաշոր կրել եկեղեցի մտնելիս:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆ

Համբարձում, նշվում է Զատիկից ուղիղ քառասուն օր հետո, հինգշաբթի: Թե՛ տոնի անունը, թե՛ նշելու օրը եկեղեցական օրացույցով բացատրվում է Ավետարանի այն պատմությամբ, ըստ որի Հարություն առնելուց հետո Քրիստոսը քառասուն օր շրջում է երկրի վրա և ապա համբառնում: Այս տոնը երևույթների այն դասական շղթայում է, երբ քրիստոնեությունը ժողովրդական տոները կատարման ժամանակով հարմարեցնում էր քրիստոնեական պաշտոնական գաղափարախոսությամբ պայմանավորված արարողություններին, նախաքրիստոնեական Հայաստանի ժողովրդական կենցաղում կարևոր դեր խաղացող գարնանային վերջին տոնը, փաստորեն կատարման ժամանակով համապատասխանեցվեց քրիստոնեական տոնացույցի Քրիստոսի Համբարձման տոնին:

Ժողովրդական կենցաղում Համբարձման տոնակատարություններն ընթացել են մի քանի օր շարունակ: Տոնի հիմնական սովորույթներն են ծաղկահավաքը, վիճակահանությունը, ուխտագնացությունը, ծիսական ուտեստը: Պատահական չէ, որ Համբարձումից բացի տոնն ունի նաև այլ անվանումներ, որոնք կապված են ծիսական այս բաղադրիչների հետ, ինչպես՝ Ծաղկաքաղի օր, Ծաղիկ գովել, Վիճակի օր, Զանգյուլումի օր, Ճակատագրի տոն, Ծաղկամոր տոն, Կաթ ուտիլի օր, Կաթնապրի տոն և այլն:Տոնի «Վիճակ» անվանումը կապված է սուրբգրային

դրվագի հետ, համաձայն որի Հիսուսի Համբարձումից հետո առաքյալները և Նրա հետևորդները մատնիչ Հուդայի փոխարեն վիճակահանությամբ ընտրում են Մատաթիային՝ որպես տասներկուերորդ առաքյալ: Վիճակահանություն կատարվում է նաև ժողովրդական ծիսակարգում, որի հիմնական մասնակիցներն աղջիկներ են: Ըստ ավանդույթի՝ աղջիկների խումբը Համբարձմանը նախորդող չորեքշաբթի՝ վաղ առավոտյան, մինչև արեգակի ծագելը, անխոս գնացել են դաշտերը, յոթ աղբյուրից՝ յոթ բուռ ջուր, հոսող առվից՝ յոթ քար, յոթ տեսակ ծառից՝ յոթ տերև, յոթ տեսակ ծաղիկ հավաքել և լցրել մի փարչի մեջ: Աղջիկները նաև մի մեծ փունջ են կապել, որը եղել է Ծաղկամերը, և դրել են կճուճի բերանին: Ծաղկահավաքի ողջ ընթացքում տղաների խմբերը հետևել են նրանց՝ փորձելով սրախոսություններով գրավել աղջիկների ուշադրությունը և խախտել լռությունը: Սակայն աղջիկները պետք է լուռ մնային, մինչև իրենց առաքելության ավարտը, վիճակի փարչի նախապատրաստումը: Աստղերը երևալուն պես վիճակի կճուճը թաքցրել են թփերի տակ, ինչը կոչվել է «աստղունք դնել», կամ պահել են աղջիկներից մեկի տանը և հսկել, որ տղաներն այն չփախցնեն: Հինգշաբթի՝ տոնի հիմնական օրը, աղջիկները երգելով շրջել են տնետուն, ծաղկեփնջեր և ջուր նվիրել, իսկ տանտիկինները նրանց տվել են յուղ, ձու և այլ մթերքներ և մեկական իր գցել վիճակի փարչի մեջ: Աղջիկների նվիրած ջուրն էլ լցրել են խնոցիները՝ առատ կարագ ունենալու ակնկալիքով, առողջանալու հավատով էլ ցողել են մարմնի հիվանդների անդամները:

ՎԱՐԴԱՎԱՌ (պայծառակերպության տոն)

Հայկական ավանդական տոների շարքում Պայծառակերպության տոնը խոշոր ամառային տոն է, որը տոնվում է Զատկից 14 շաբաթ հետո: Նախաքրիստոնեական Հայաստանում այս տոնը կապվում էր հեթանոսական

Անահիտ աստվածուհու հետ, ում հեթանոսական տաճարն էին գնում երիտասարդներն ու տարեցները ուխտագնացության: Վարդավառ անունը ունի երկու նշանակություն՝ վարդերով վառված և ջուր ցողել: Լեգենդի համաձայն հայկական Աստղիկ աստվածուհին սեր էր տարածում վարդի ջուր ցողելով և վարդեր նվիրելով: Վահագն Աստվածը պահել էր այդ սերը՝ վիշապների դեմ պայքարելով: Տոնը ձևավորվել է քրիստոնեության ընդունումից հետո: Այժմ վարդավառի ժամանակ բոլորը ջուր են ցողում միմյանց վրա վաղ առավոտից, և ոչ ոք չպետք է նեղանա կամ վիրավորվի այդ չարաճճիության համար:

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ

Սբ. Աստվածածնի վերափոխման տոնը հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից չորրորդն է և Տիրամորը նվիրված տոներից ամենահինը:Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնը համարվում է Մարիամ Աստվածածնի՝ երկինք փոխադրվելու հիշատակի օրը, որը նշվում է օգոստոսի 15-ի մերձակա կիրակի օրը: Այդ օրը մարդիկ նաև եկեղեցի օրհնության են բերում տարվա մեջ առաջին անգամ քաղված խաղողը: Խաղողի պաշտամունքը հին սովորություն է. նախաքրիստոնեական Հայաստանում խաղողը հատուկ ծիսակարգով օրհնել է արքան կամ քրմապետը:

ՆԱՎԱՍԱՐԴ

Նավասարդը հայկական տոմարի առաջին ամիսն էր: Կազմված է «նավ» նոր և «սարդ» տարի բառերից և նշանակում է Նոր տարի:Նավասարդ ամիսն ունեցել է 30 օր, սկսվել է օգոստոսի 11-ին և վերջացել սեպտեմբերի 9-ին: Հին հայերի համար Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը) եղել է ժողովրդական խրախճանքների տոն: Նավասարդյան օրերը հայերը տոնում էին առանձին շուքով:Նոր տարին սկսվում էր նավասարդի (օգոստոս) մեկից և տևում մեկ շաբաթ: Հայկական բոլոր ընտանիքներում Նավասարդը դիմավորում էին մեծ շուքով: Այդ օրը յուրահատուկ կերակուրներ և ուտելիք էին պատրաստում: Ճոխ սեղան էին բացում և ընտանիքի

բոլոր անդամներն ուրախությամբ էին դիմավորում Նավասարդը։ Երդիկներից կախում էին գույնզգույն գուլպաներ, այն ակնկալիքով, որ դրանց մեջ Նոր տարվա նվերներ կհայտնվեն։

Եզրակացություն

Այսպիսով այս ամենից ես եզրակացրեցի ,որ ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ մոգական գործողություն, ո՛չ կրոնական պաշտամունք: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Հայ եկեղեցին ծեսը սահմանում է որպես աղոթքի կարգ, որն ունի կարգավորված և ներդաշնակ նկարագիր: Ծեսը հավատացյալների վրա ներգործելու ազդելու միջոց է:Եվ քանի որ ծեսը նաև իր մեջ է կոդավորում ամբողջ մշակութային կոդ,սովորություններ ու հավատալիքներ `շատ կարևոր է դա ներմուծել նաև նախադպրոցական կրթական հաստատություններ:

Ծեսը ներէթնիկական կապերի կարգավորման դեր ունի՝ օգնում է էթնոսի անդամներին յուրացնել խմբային նորմերն ու արժեքները, համախմբվել, ինչպես նաև հանել առօրյա կյանքի նյարդային և հոգեբանական լարվածությունը: Հետագայում պետություններն օգտագործում են ծեսի խորհրդանշական ուժն իրենց խնդիրների լուծման համար: Ժամանակի ընթացքում այն տարածվում է պետական արարողությունների և կենցաղային ձևերի վրա: Աստիճանաբար ծեսը որոշ ավանդական կանոններին հետևելու բնույթ է ստանում: Ամեն դեպքում ծեսը նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, էթնոսին, պետությանը:

Գրականության ցանկ

- Ионин Л. Г. Социология культуры, М., 2004, с. 166
- Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
- Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավա-տալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:
- Քաջբերունի, Հայկական սովորույթներ [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168]:
- Кагаров Е. Г. Культ фетишей и животных в Древней Греции, СПб., 1913
- Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե.,2004